

## ՄԱԿ-ի օր Հայաստանի ազգային գրադարանում

Հոկտեմբերի 23-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը և Հայաստանի ազգային գրադարանը, կազմակերպել էին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի գործունեության 25-ամյակին նվիրված ցուցադրություն: Ներկայացված էին ՄԱԿ-ի` Հայաստանում գործող մասնագիտացված գործակալությունների, հիմնադրամների, ծրագրերի և վարչությունների կողմից 25 տարվա ընթացքում հրատարակված զեկույցներ, հետազոտություններ, ուղեցույցներ, թեմատիկ այլ գրականություն:

Հայաստանի ազգային գրադարանում էին Հայաստանի Հանրապետության տարբեր դպրոցներում սովորող աշակերտներ, որոնք մասնակցել են ՄԱԿ-ի օրվան (հոկտեմբերի 24) ընդառաջ հայտարարված առցանց մրցույթին: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները մրցույթի հաղթողներին հանձնեցին հավաստագրերը և հուշանվերներ:



